Հիփոթեքային վարկ զինծառայողներին – Հաճախ տրվող հարցեր (FAQ)

1. Ի՞նչ ծրագիր է և ո՞վ կարող է օգտվել ծրագրից

Պետական աջակցության ծրագրի շրջանակներում սպայական և ավագ ենթասպայական կազմերի զինծառայողներին տրամադրվում է հիփոթեքային վարկ, որի միջոցով նրանք կարող են ձեռք բերել բնակարան կամ կառուցել բնակելի տուն:

---

2. Ի՞նչ նպատակով կարելի է ստանալ վարկը

Վարկը կարող է տրամադրվել հետևյալ նպատակներով՝

- Բնակարան ձեռք բերելու համար,
- Բնակելի տուն ձեռք բերելու համար,
- Բնակելի տուն կառուցելու համար:

Այս պահին Բանկի կողմից վարկեր տրամադրվում են միայն առաջնային շուկայից բնակարան ձեռք բերելու նպատակով:

---

3. Քանի՞ անգամ կարելի է օգտվել ծրագրից

Ծրագրի շրջանակում հիփոթեքային վարկը տրամադրվում է միայն մեկ անգամ: Եթե ամուսիններից երկուսն էլ զինծառայող են, ծրագրից կարող է օգտվել միայն նրանցից մեկը:

---

4. Որքա՞ն է վարկի տարեկան տոկոսադրույքը

Առաջնային շուկայից բնակարան ձեռք բերելու դեպքում վարկի տարեկան տոկոսադրույքը կազմում է 11%, որի 5%-ը սուբսիդավորվում է պետության կողմից:

---

5. Որքա՞ն է վարկի կանխավճարը

Կանխավճարը կախված է գույքի տեսակից: Առաջնային շուկայից բնակարան ձեռք բերելու դեպքում այն կազմում է 10%, որից 2,500,000 ՀՀ դրամը ֆինանսավորվում է պետության կողմից:

6. Կարո՞ղ են ընտանիքի անդամները հանդես գալ որպես համավարկառու

Այո: Համավարկառու կարող են լինել զինծառայողի ընտանիքի անդամները՝ ծրագրի սահմանած շրջանակներում: